ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/19

«06» 04 2022թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ՀԱԷԿ-ի շինարարություն>> ՓԲԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Ա.Վարդանյանին, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **ՀՀ Արմավիրի մարզի «Վաղարշապատի Երվանդ Օտյանի անվան N 7 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի, ՀՀ Արմավիրի մարզի «Արագածի Մ. Մեխակյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, ՀՀ Արմավիրի մարզի «Ջանֆիդայի Է. Դաշտոյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, ՀՀ Արմավիրի մարզի «Արմավիրի N 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի, ՀՀ Արմավիրի մարզի «Արտիմետի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճների կառուցման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Աշխատանքի ողջ ծավալով կատարման ժամկետ է սահմանվում՝

- ՀՀ Արմավիրի մարզի «Վաղարշապատի Երվանդ Օտյանի անվան N 7 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների համար 290 օրացուցային օրը,

- ՀՀ Արմավիրի մարզի «Արագածի Մ. Մեխակյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների համար 290 օրացուցային օրը,

-ՀՀ Արմավիրի մարզի «Ջանֆիդայի Է. Դաշտոյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների համար 290 օրացուցային օրը,

-ՀՀ Արմավիրի մարզի «Արմավիրի N 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների համար 290 օրացուցային օրը,

-ՀՀ Արմավիրի մարզի «Արտիմետի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների համար 365 օրացուցային օրը:

Պայմանագրով նախատեսված աշխատանքի սկիզբ է համարվում շինարարական աշխատանքների կատարման, տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պայմանագրերի ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրը:

Աշխատանքի կատարման երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից պայմանագրի արդյունքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

1.3.1 Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների և ծավալների կատարման ժամկետները սահմանված են օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

1.3.2 Պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետների մեջ չեն հաշվարկվում.

1.3.2.1 հեղինակային և/կամ տեխնիկական հսկողության պայմանագրերի լուծման դեպքում՝ պայմանագրերի լուծման օրվանից մինչև նոր պայմանագրերի կնքմանը հաջորդող օրն ընկած ժամանակահատվածը,

1.3.2.2 շինարարական աշխատանքների կատարումն անհնարին դառնալու օրվանից մինչև դրանց վերսկսելու օրն ընկած ժամանակահատվածը, որն արձանագրվում է տեխնիկական և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպությունների առաջարկության հիման վրա՝ պատասխանատու ստորաբաժանման կողմից տրված եզրակացությամբ:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի 5 Հավելվածում (Աղյուսակներ N 1 և N 2):

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Կողմերի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքները:

4.6 Աշխատանքն ամբողջությամբ ընդունելիս գործում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն: Ընդ որում՝ վերջին վճարման կատարողականի գումարը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

6) չի կիրառվում պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետը:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 1 350 750 000 (մեկ միլիարդ երեք հարյուր հիսուն միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, որից 225 125 000 (երկու հարյուր քսանհինգ միլիոն մեկ հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն, ընդ որում՝

- ՀՀ Արմավիրի մարզի «Վաղարշապատի Երվանդ Օտյանի անվան N 7 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների համար – 263 844 796 (երկու հարյուր վաթսուներեք միլիոն ութ հարյուր քառասունչորս հազար յոթ հարյուր իննսունվեց) ՀՀ դրամ, որից 43 974 133 (քառասուներեք միլիոն ինը հարյուր յոթանասունչորս հազար մեկ հարյուր երեսուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն,

- ՀՀ Արմավիրի մարզի «Արագածի Մ. Մեխակյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների համար-349 761 578 (երեք հարյուր քառասունինը միլիոն յոթ հարյուր վաթսունմեկ հազար հինգ հարյուր յոթանասունութ) ՀՀ դրամ, որից՝ 58 293 596 (հիսունութ միլիոն երկու հարյուր իննսուներեք հազար հինգ հարյուր իննսունվեց) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն,

-ՀՀ Արմավիրի մարզի «Ջանֆիդայի Է. Դաշտոյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների համար – 302 721 858 (երեք հարյուր երկու միլիոն յոթ հարյուր քսանմեկ հազար ութ հարյուր հիսունութ) ՀՀ դրամ, որից՝ 50 453 643 (հիսուն միլիոն չորս հարյուր հիսուներեք հազար վեց հարյուր քառասուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն,

-ՀՀ Արմավիրի մարզի «Արմավիրի N 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների համար – 257 080 348 (երկու հարյուր հիսունյոթ միլիոն ութսուն հազար երեք հարյուր քառասունութ) ՀՀ դրամ, 42 846 725 (քառասուներկու միլիոն ութ հարյուր քառասունվեց հազար յոթ հարյուր քսանհինգ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն,

-ՀՀ Արմավիրի մարզի «Արտիմետի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների համար-177 341 420 (մեկ հարյուր յոթանասունյոթ միլիոն երեք հարյուր

քառասունմեկ հազար չորս հարյուր քսան) ՀՀ դրամ, որից՝ 29 556 903 (քսանինը միլիոն հինգ հարյուր հիսունվեց հազար ինը հարյուր երեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի Պայմանագրում նշված հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

5.4 Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.4.1 Պայմանագրի գնից՝ մինչև 25%-ի չափով, Պատվիրատուն կարող է փոխանցել Կապալառուի բանկային հաշվին որպես կանխավճար՝ բանկային երաշխիքի առկայության դեպքում՝ հիմք ընդունելով աշխատանքների կատարման տվյալ տարվա համար նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում կատարվելիք աշխատանքների օրացուցային գրաֆիկով սահմանված ժամկետները:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կապալառուին վճարումներ չեն կատարվում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.6 Տույժի հաշվարկման հիմքում ընկած աշխատանքային օրերի մեջ չեն ներառվում կատարողական ակտում արտացոլված ժամանակահատվածի վերջին օրվանից մինչև կատարողական փաստաթղթերը Պատվիրատուին հանձնելու ամսաթիվն ընկած մինչև հինգ աշխատանքային օրը, որը տրվում է Կապալառուին՝ տվյալ փուլի աշխատանքներն ավարտելուց հետո կատարողական փաստաթղթերը կազմելու և աշխատանքները տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության կողմից հաստատվելու հետ կապված գործողությունները պատշաճ կերպով իրականացնելու համար:

6.7 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.8 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի ձեռքբերման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ընդհանուր ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ընդհանուր ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով (անհրաժեշտության դեպքում բանկային երաշխիքների ձևով ներկայացրած ապահովումների ժամկետների երկարաձգումը հավաստող փաստաթղթերի առկայությամբ):

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011039964, 900011039956, 900011039972
900011039980, 900011034536
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ՝

«ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ
ՀՀ ք. Երևան, 0043 Շարուրի 36/2
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500130861408
ՀՎՀՀ 04412536
Տնօրեն՝

Ա. Վարդանյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 1
«06» 04 2022թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/19 գնման պայմանագրի

ՀՀ Արմավիրի մարզի ,Վաղարշապատի Երվանդ Օտյանի թիվ 7 հիմնական դպրոցե ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցում

ՕԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

N/N	Աշխատանքների անվանումը	Չափ. միավորը	Քանակը	Միավորի արժեքը	Ընդամենը (հազ. դրամ)
1	2	3	5	6	7
	ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
1	Մարզադահլիճային մասնաշենքի քանդում	մ³	5370.00	2	10740
2	Շին աղբի բարձում մեխանիզմով	մ³	1611.00	0.432	695.952
3	Տեղափոխում 7կմ	մ³	2738.70	0.8	2190.96
4	Բետոնե եզրաքարերի քանդում 150x300մմ չափերի	գծմ	260.0	0.8	208
5	Մալվածքի քանդում բետոնե	մ³	11.7	8	93.6
6	Շին աղբի բարձում և տեղափոխում 7կմ հեռ.վրա	տ	77.48	1.6	123.968
	Ընդամենը՝ քանդման աշխատանքներ				14052.48
	ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ՄԱՍ				
	2.Մասնաշենք 1.1				
	2.1.Միաձույլ հիմնային հեծան -2.100 նիշ				
7	Գրունտի մշակում էքսկավատորով 2-րդ կարգի բնահողում կողոփոք	մ³	344	0.52	178.88
8	2-րդ կարգի գրունտի մշակում ձեռքով	մ³	19.00	2.8	53.2
9	Հիմքերի մակերևույթի ջրամեկուսացում բիտումի մածիկով 2 շերտ	մ²	242.0	2.4	580.8
10	Գրունտի եղիցք մեխանիզմով	մ³	328	0.4	131.2
11	Գրունտի տափանում	մ³	328	4	1312
12	Գրունտի եղիցք ձեռքով տափանումով	մ³	19	2	38
13	Ավելորդ գրունտի բարձում և տեղափոխում 7կմ հեռ.վրա	տ	24.00	1.6	38.4
14	Բազալտե խճի իրականացում	մ³	6.6	6.4	42.24
15	Բետոնե նախապատրաստական շերտ B7,5 բետոնով	մ³	6.6	40	264
16	Բուտոբետոնե հիմքի իրականացում բետոնով B15	մ³	30.20	32	966.4
17	Ե/բետոնե հիմնային հեծանի իրականացում B20 բետոնով	մ³	32.30	48	1550.4
18	Ամրան Փ18 A500c	տ	1.5929	480	764.592
19	Ամրան Փ8A240	տ	1.0199	480	489.552
20	Մետաղական թիթեղ 80*80*10	կգ	56.3	0.96	54.048
	2.2.Ե/բետոնե հատակ -0.05 նիշ				
21	Խճի շերտ	մ³	16.90	6.4	108.16
22	Ե/բետոնե հատակի իրականացում B12,5 բետոնով	մ³	16.90	40	676
23	Փ5Bp1 150*150	մ²	169.0	1.2	202.8
	2.3.Շրջանակ Ա,Բ,Գ,Ե, 1,2,3 առանցքով				
24	Ե/բետոնե սյուների իրականացում B25 բետոնով	մ³	8.80	64	563.2
25	Ե/բետոնե պարզունակների իրականացում B25 բետոնով	մ³	18.40	64	1177.6
26	Ամրան Փ18փ20 A500c	տ	2.4858	480	1193.184
27	Ամրան Փ8A240	տ	1.0846	480	520.608
28	Մետաղական թիթեղ 80*80*10	կգ	104.5	0.96	100.32
	2.4.Ծածկի սալ +3.180 նիշում				
29	Ե/բետոնե սալի իրականացում B25 բետոնով	մ³	27.90	56	1562.4
30	Ամրան Փ10A500c	տ	1.1463	480	550.224
31	Ամրան Փ8A500c	տ	0.7339	480	352.272
32	Ամրան Փ8A240	տ	0.1502	480	72.096
	Ընդամենը՝ Մասնաշենք 1.1				13542.576
	3.Մասնաշենք 1.2				
	3.1.Միաձույլ հիմնային հեծան -2.100 նիշ				
33	Գրունտի մշակում էքսկավատորով 2-րդ կարգի բնահողում կողոփոք	մ³	1058	0.48	507.84
34	2-րդ կարգի գրունտի մշակում ձեռքով	մ³	56.00	0.48	26.88

1	2	3	5	6	7
35	Հիմքերի մակերևույթի ջրամեկուսացում բիտումի մածիկով 2 շերտ	մ²	504.0	2.4	1209.6
36	Գրունտի եռլիցք մեխանիզմով	մ³	1074	0.432	463.968
37	Գրունտի տոփանում	մ³	1074	0.4	429.6
38	Գրունտի եռլիցք ձեռքով տոփանումով	մ³	56	2	112
39	Ավելորդ գրունտի բարձում և տեղափոխում 7կմ հեռ.վրա	տ	24.00	1.6	38.4
40	Բազալտե խճի իրականացում	մ³	21	6.4	134.4
41	Բետոնե նախապատրաստական շերտ B7,5 բետոնով	մ³	21	40	840
42	Բուտոբետոնե հիմքի իրականացում բետոնով B15	մ³	58.00	32	1856
43	Ե/բետոնե հիմնային հեծանի իրականացում B20 բետոնով	մ³	106.20	48	5097.6
44	Ամրան 18-22ՓA500c	տ	7.6007	480	3648.336
45	Ամրան Փ8A240	տ	2.9015	480	1392.72
46	Մետաղական թիթեղ 80*80*10	կգ	88.5	0.96	84.96
47	Ներդիր էլեմենտներ լիստ	կգ	1130.5	0.96	1085.28
48	Ներդիր էլեմենտներ հեղյուս, մանեկ,տափողակ	կգ	784.0	0.96	752.64
	3.2.Ե/բետոնե հատակ -0.05 նիշ				
49	Խճի շերտ	մ³	63.90	6.4	408.96
50	Ե/բետոնե հատակի իրականացում B12,5բետոնով	մ³	63.90	16	1022.4
51	Փ5Bp1 150*150	մ²	623.0	1.2	747.6
52	Բուտոբետոնե հիմքի իրականացում բետոնով B15	մ³	5.90	32	188.8
	3.3.Շրջանակ Ա առանցքով				
53	Մետաղական շրջանակի մոնտաժում	տ	4.007	240	961.752
54	90*90*6 անկյունակի արժեքը	գծմ	104.66	4.08	426.99648
55	մետաղական թիթեղ 8փ12 մմ հաստության	տ	0.16	640	99.52
56	մետաղական 300*300*8 խողովակ	տ	2.50	640	1600.64
57	N20 երկտավր	գծմ	22.800	9.6	218.88
58	Մետաղական մասերի ներկում	տ	4.01	40	160.292
	3.4.Շրջանակ Զ առանցքով				
59	Մետաղական շրջանակի մոնտաժում	տ	2.72	240	653.616
60	90*90*6 անկյունակի արժեքը	գծմ	48.98	4.08	199.82208
61	մետաղական թիթեղ 8փ12 մմ հաստության	տ	0.06	480	28.992
62	մետաղական 300*300*8 խողովակ	տ	1.78	480	852.528
63	N20 երկտավր	գծմ	22.800	9.6	218.88
64	Մետաղական մասերի ներկում	տ	2.72	40	108.936
	3.5.Շրջանակ 3',7 առանցքով				
65	Մետաղական շրջանակի մոնտաժում	տ	7.09	400	2834.68
66	90*90*6 անկյունակի արժեքը	գծմ	213.09	4.08	869.39904
67	մետաղական թիթեղ 8փ12 մմ հաստության	տ	0.17	480	83.424
68	մետաղական 300*300*8 խողովակ	տ	3.24	480	1557.12
69	N20 երկտավր	գծմ	90.164	9.6	865.5744
70	Մետաղական մասերի ներկում	տ	7.09	40	283.468
	Ընդամենը՝ Մասնաշենք 1.2				32072.504
	4.Մետաղական ֆերմա, պատ				
	4.1.Մետաղական ֆերմա 15մ				
71	Մետաղական էլեմենտներով ֆերմաների մոնտաժում /ծպեղնավոտք-հեծան, անկյունակ, մետաղական թիթեղ	տ	11.3336	240	2720.064
72	75*75*5 անկյունակի արժեքը	տ	0.0804	2.8	0.22512
73	160*64*5 հեծանի արժեքը	գծմ	266.772	8.8	2347.5936
74	63*63*6 անկյունակի արժեքը	գծմ	63.7000	2.88	183.456
75	75*75*6 անկյունակի արժեքը	գծմ	70.7300	2.8	198.044
76	90*90*6 անկյունակի արժեքը	գծմ	70.7300	4.08	288.5784
77	80*80*6 անկյունակի արժեքը	տ	0.3865	560	216.44
78	110*110*8 անկյունակի արժեքը	տ	1.9650	640	1257.6
79	120*120*10 անկյունակի արժեքը	տ	2.7985	640	1791.04
80	մետաղական թիթեղ 10փ12 մմ հաստության	տ	1.2755	640	816.32
81	Մետաղական ուղղաձիգ կապերի, մոնտաժում	տ	1.1408	240	273.792
82	մետաղական թիթեղ 8 մմ հաստության	տ	0.289	640	185.088

1	2	3	5	6	7
83	63*63*6 անկյունակի արժեքը	գծմ	92.7200	2.88	267.0336
84	50*50*5 անկյունակի արժեքը	գծմ	84.8800	2.8	237.664
85	Մետաղական հորիզոնական կապերի, մոնտաժում	տ	1.1115	240	266.76
86	մետաղական թիթեղ 8 մմ հաստության	տ	0.1719	640	110.016
87	50*50*5 անկյունակի արժեքը	գծմ	249.2000	2.8	697.76
88	Մետաղական մասերի ներկում	տ	13.59	40	543.436
	4.2.Մետաղական ֆերմա 12մ				
89	Մետաղական էլեմենտներով ֆերմաների մոնտաժում /ծպեղնավոտք-հեծան, անկյունակ, մետաղական թիթեղ	տ	8.3260	240	1998.24
90	50*50*5 անկյունակի արժեքը	գծմ	55.4100	2.8	155.148
91	63*63*6 անկյունակի արժեքը	գծմ	113.2500	2.88	326.16
92	75*75*7 անկյունակի արժեքը	տ	0.6825	2.4	1.638
93	80*80*7 անկյունակի արժեքը	տ	0.1300	3.2	0.416
94	75*75*5 անկյունակի արժեքը	տ	0.0502	2.8	0.14056
95	160*64*5 հեծանի արժեքը	գծմ	217.728	6.4	1393.4592
96	90*90*8 անկյունակի արժեքը	տ	2.5055	6.4	16.0352
97	մետաղական թիթեղ 10փ12 մմ հաստության	տ	1.0080	560	564.48
98	Մետաղական ուղղաձիգ կապերի, մոնտաժում	տ	1.7952	240	430.848
99	մետաղական թիթեղ 8 մմ հաստության	տ	0.277	640	177.152
100	63*63*5 անկյունակի արժեքը	գծմ	189.7600	1.6	303.616
101	50*50*5 անկյունակի արժեքը	գծմ	160.2240	1.6	256.3584
102	Մետաղական հորիզոնական կապերի, մոնտաժում	տ	0.7052	240	169.248
103	մետաղական թիթեղ 8 մմ հաստության	տ	0.160	640	102.144
104	50*50*5 անկյունակի արժեքը	գծմ	144.6560	1.6	231.4496
105	Մետաղական մասերի ներկում	տ	10.83	4	43.3056
106	Տախտակամածի իրականացում ներկման համար և ցանցի ամրացման համար	$մ^2$	665.00	1.12	744.8
	4.3.Պատ մասնաշենք 1.2				
107	Շարվածքի իրականացում ռ/կ տուֆով		48.00	28	1344
108	Շարվածքի ամրանավորում ցանցով Փ6Ac1	տ	0.2155	480	103.44
	Ընդամենը՝ Մետաղական ֆերմա, պատ Итого: Металлическая ферма, стена				20762.98928
	5.Տանիք/Крыша				
109	Գոլորշամեկուսիչ՝ շերտ պոլիպրոպիլենից, խզման բեռնվածքը ոչ պակաս 1068/890 Ն/5սմ, գոլորշաթափանցման դիմադրությունը ոչ պակաս 7քմ.ժ.Պա/մգ ,ջրակայունությունը ոչ պակաս 1000մմ ջ	$մ^2$	198.00	2.4	475.2
110	Հանքաբամբակ 30 կգ/խմ խտությամբ, 100մմ հաստությամբ, /100 և 50 մմ շերտով կիսակոշտ սալեր/ ջերմունակությունը ոչ պակաս 0,84 կՋ(կգ °C) Ջերմափոխանցման գործակիցը 0,036 Վտ/մ. °C	$մ^2$	198.00	2.4	475.2
111	Ջրամեկուսիչ, գոլորշաթափանց՝ պոլիպրոպիլենից հրակայուն, խզման բեռնվածքը ոչ պակաս 330/180 Ն/5սմ, ջրային գոլորշու հոսքի խտությունը ոչ պակաս 1000գ/քմ. 24ժամ, ջրակայունությունը ոչ պակաս 1000մմ ջ.ս	$մ^2$	198.00	3.2	633.6
112	12մմ հաստ.նրբատախտակից անցուղիների հատակի պատրաստում	$մ^2$	15.60	8	124.8
113	Փայտյա 160x80մմ չորսուներից նրբատախտակի հատակի հենարանների տեղադրում	$մ^2$	15.60	4	62.4
114	Ալյումինե անկյունակ 40*40*4 L=100mm	կգ	40.70	0.96	39.072
115	Տանիքի փայտե կոնստրուկցիաների իրականացում		4.924	176	866.624
116	Տանիքածածկի իրականացում պրոֆիլավոր ԿՊ25-0,5մմ ցինկապատ թիթեղով գունավոր /գագաթի +գոգնոց 32,7 քմ թիթեղ 0,5մմ/ /կավարամած+գագաթի տախտակ 1+0,25 խմ/	$մ^2$	193.80	8	1550.4
117	Օդափոխության պատուհանների տեղադրում շերտափեղկով	հատ	2	20	40
118	Օդափոխության պատուհանների շերտափեղկի ներկում		3.80	1	3.8
119	Օդափոխության պատուհանների երեսպատում 0.5մմ ցինկապատ թիթեղով գունավոր	$մ^2$	15.0	6.4	96

1	2	3	5	6	7
120	Ջրատարի իրականացում ցինկապատ գունավոր 0.5մմ թիթեղով, փայտանյութով	գծմ	20.00	6.4	128
121	Ջրհոս խողովակների կոմպլեկտ 4մ բարձրությամբ Փ120 ցինկապատ գունավոր թիթեղով	կ-տ	4.00	20	80
122	Ձնարգել 2 մ երկ.գունավոր	հատ	8.000	2.4	19.2
123	Փայտե կոնստրուկցիաների հրապաշտպանություն		4.924	80	393.92
124	Կավարամածի և տախտակամածի հրապաշտպանություն		210.0	0.4	84
125	Կավարամածի և տախտակամածի մշակում հականեխիչ նյութով	$մ^2$	210.0	0.8	168
126	Տանիքի պաշտպանիչ ճաղաշար	գծմ	20.000	2.4	48
127	Մետաղական էլեմենտների ներկում	տ	0.083	40	3.31
128	Տանիք բարձրացող մետաղական աստիճանի մոնտաժում	կգ	85.00	0.96	81.6
129	Անկյունակ 63*63*5	գծմ	7.600	2.4	18.24
130	Պողպատե խողովակ Փ16	գծմ	5.400	2.4	12.96
131	Մետաղական էլեմենտների ներկում	տ	0.85	40	34
132	Տանիք բարձրացող մետաղական դռնակի մոնտաժում երեսպատված փայտով	կգ	20.84	1.2	25.008
133	Անկյունակ 63*63*5	գծմ	3.360	2.4	8.064
134	Երեսպատում փայտով	$մ^2$	0.71	8	5.6448
135	Երեսապատում ցինկապատ թիթեղով	$մ^2$	1	6.4	6.4
136	Դռնակի ներկում		2.00	1	2
137	Պողպատե մասերի ներկում 2 անգամ	$մ^2$	2.5	1	2.5
	Ընդամենը՝ Տանիք				5487.9428
	6.Մարզադահլիճի սենդվիչ պանելներ				
138	Տանիքածածկի իրականացում սենդվիչ պանելներով 120մմ հաստ.ցինկապատ պրոֆիլավոր գունավոր թեթեղներից 0.45մմ հանքաբամբակով ջերմամեկուսացված 120կգ/խմ	$մ^2$	725.00	28	20300
139	Պատի սենդվիչ պանելներ 100մմ հաստ.ցինկապատ պրոֆիլավոր գունավոր թեթեղներից 0.45մմ հանքաբամբակով ջերմամեկուսացված 120կգ/խմ	$մ^2$	542.00	24	13008
140	Մանր ծածկույթների երեսպատում 0.50մմ ցինկապատ գունավոր թիթեղով	$մ^2$	380.7	7.2	2740.68
141	Կախովի ջրհորդանների /ուղղանկյուն ցինկապատ գունավոր 0,5մմ/ իրականացում	գծմ	51.00	8	408
142	Ջրհոս խողովակների կոմպլեկտ 6,8մ բարձրությամբ Փ120 ցինկապատ գունավոր թիթեղով	կ-տ	6.00	8	48
143	Ձնարգել 2 մ երկ.գունավոր	հատ	18.0	4	72
	Ընդամենը՝ Մարզադահլիճի սենդվիչ պանելներ				36576.68
	7. Միջնորմներ մասնաշենք 1.1-1.2				
144	Միջնորմների շարվածքի իրականացում պեմզաբլոկներով	$մ^3$	49.6	36	1785.6
145	Միջնորմների անցքերի լցնում թեթև բետոնով 7,5		12.4	24	297.6
146	Շարվածքի ամրանավորում	տ	0.5379	80	43.0336
147	Ամրան Փ12A500c	տ	0.2425	480	116.4
148	Ամրան Փ10A500c	տ	0.1772	480	85.056
149	Թիթեղ	կգ	118.22	0.96	113.4912
150	Ճկուն կապ փրփրապլաստով 2սմ հաստ	$մ^3$	0.80	28	22.4
151	Փրփրապլաստի արժեքը	$մ^2$	40.0	1.2	48
152	Ե/բետոնե բարավորի իրականացում B15 բետոնով		0.60	48	28.8
153	Ամրան Փ6 Ac	տ	0.020	480	9.648
154	Ամրան Փ12 A500c	տ	0.020	480	9.648
155	Միջնորմների շարվածքի իրականացում պեմզաբլոկներով	$մ^3$	12.49	32	399.68
156	Միջնորմների անցքերի լցնում թեթև բետոնով 7,5		3.3	24	79.2
157	Շարվածքի ամրանավորում	տ	0.3997	80	31.9744
158	Ամրան Փ12 A500c	տ	0.2292	480	110.016
159	Ամրան Փ10A500c	տ	0.0817	480	39.216
160	Թիթեղ	կգ	88.78	0.96	85.2288
161	Ճկուն կապ փրփրապլաստով 2սմ հաստ	$մ^3$	0.20	28	5.6
162	Փրփրապլաստի արժեքը	$մ^2$	10.0	1.2	12

1	2	3	5	6	7
163	Ե/բետոնե բարավորի իրականացում B15 բետոնով		0.50	48	24
164	Ամրան Փ6 A240	տ	0.005	480	2.4576
165	Ամրան Փ12 A500c	տ	0.032	480	15.408
	Ընդամենը՝ Միջնորմներ, մասնաշենք 1.1-1.2				3364.4576
	8.Բացվածքներ				
166	Մետաղապլաստե բլոկով մոխրագույն 60մմ հաստ.ապակեփաթեթով 4+4 պատուհանների տեղադրում /բացվող մաս արտերկիր/	մ²	7.18	48	344.64
167	Մետաղապլաստե բլոկով մոխրագույն 60մմ հաստ.ապակեփաթեթով 4+4 պատուհանների տեղադրում /չբացվող մաս արտերկիր/	մ²	60.26	48	2892.48
168	Պլաստմասե պատուհանագոգերի տեղադրում 450մմ	գծմ	67.44	1.6	107.904
169	Պատուհանագոգեր 450մմ հաստ.սպիտակ	գծմ	32.00	2.4	76.8
170	50մմ հաստ.350մմ լայնությամբ բազալտե սալերից արտաքին պատուհանագոգերի տեղադրում	մ²	1.02	40	40.8
171	Մետաղապլաստե բլոկով մոխրագույ 60մմ հաստ.ապակեփաթեթով 4+4 դռների տեղադրում /արտերկիր/	մ²	49.32	48	2367.36
172	Ալյումինե մոխրագույն ջերմակամուրջով 60մմ հաստ.ապակեփաթեթով 4+4 դռների տեղադրում / /Եվրոպական կամ համարժեք//	մ²	7.08	64	453.12
173	Շեպերի գաջի սվաղ բարձրորակ	մ²	7.91	3.2	25.312
174	Շեպերի բարձրորակ ներկում կիսափայլուն լատեքսային ներկով /ՇԵՆ կամ համարժեք/	մ²	7.91	2.4	18.984
	Ընդամենը՝ Բացվածքներ				6327.4
	9.Բեմի կառուցում, հատակներ				
	9.1. Բեմի կառուցում				
175	Բեմի փայտե կոնստրուկցիաների իրականացում	մ³	6.57	256	1682.688
176	Փայտե կոնստրուկցիաների հրապաշտպանություն	մ³	6.57	64	420.672
177	Լամինատե 8մմ հաստ. C5 կարգի հատակների իրականացում սպունգով շրիշակով	մ²	56.00	12	672
178	Երեսպատում լամինատե սալով	մ²	17.2	12	206.4
179	Լամինատե ալյումինե անկյունակ	գծմ	25.0	4	100
	9.2.Հատակներ				
180	Ց/ավազե հարթաշերտի իրականացում 30մմ հաստ.	մ²	816.40	4	3265.6
181	Հատակների ջրամեկուսացում մեկ շերտ իզոգամով	մ²	816.4	4	3265.6
182	Վինիլային հակաստատիկ 2մմ հաստ. Հոմոգեն հատակների իրականացում նախաշերտի,սոսնձի, շրիշակների հետ միասին	մ²	68.8	12	825.6
183	Վինիլային հակաստատիկ 2մմ հաստ. Հետերոգեն սպորտային հատակների իրականացում նախաշերտի,սոսնձի, շրիշակների հետ միասին	մ²	379.7	12	4556.4
184	Խեցեսալե սալիկներով հատակների իրականացում	մ²	21.5	8.8	189.2
185	Մամլոգրանիտե սալերով հատակների իրականացում 600*600	մ²	113.4	10.4	1179.36
186	Մամլոգրանիտե սալերով շրիշակների իրականացում h=100մմ	գծմ	117.7	1.6	188.32
187	Կավրոլիտե հատակների իրականացում հաճարե շրիշակներով	մ²	233.0	2.4	559.2
	Ընդամենը՝ բեմի կառուցում, հատակներ				17111.04
	10. Մարզադահլիճի գույք, մարզադահլիճի պատուհանների ցանց, մարզադահլիճի առաստաղի ցանց, ներքին հարդարման աշխատանքներ				
	10.1.Մարզադահլիճի գույք				
188	Բասկետբոլի վահան ցանցով /մետաղական շրջանակ. Օրգանական ապակի, սիլիկոն	կ-տ	1.00	96	96
189	Բասկետբոլի մարզական վահան /մետաղական շրջանակ. Օրգանական ապակի, սիլիկոն	հատ	4.00	96	384
190	Գնդակը նշանակետին նետելու վահանակ	հատ	1.00	40	40
	10.2.Մարզադահլիճի պատուհանների ցանց				
191	Մեաղական կարկասի մոնտաժում /անկյունակ 50*50*5 և դյուբել/	կգ	166.29	0.24	39.909696
192	Անկյունակ 50*50*5	գծմ	44.80	2.88	129.024

1	2	3	5	6	7
193	դյուբել 6*40	հատ	88.00	0.4	35.2
194	Ֆուտբոլի դարպասի ցանց 7,2*2,5 D=4mm	հատ	1.70	28	47.6
195	Մետաղական մասերի ներկում	տ	0.180	40	7.2
	10.3.Մարզադահլիճի առաստաղի ցանց				
196	Ֆուտբոլի դարպասի ցանցի ամրացում	մ²	379.70	2.4	911.28
197	Ֆուտբոլի դարպասի ցանց 7,2*2,5 D=4mm	հատ	21.00	28	588
	10.4.Ներքին հարդարման աշխատանքներ				
198	Պատերի լավորակ գաջի սվաղի իրականացում	մ²	867.0	2	1734
199	Պատերի լավորակ ներկում կիսափայլուն լատեքսային ներկով /ՇԵՆ կամ համարժեք/	մ²	867.0	2.4	2080.8
200	Առաստաղների լավորակ գաջի սվաղի իրականացում	մ²	151.9	2.4	364.56
201	Առաստաղների լավորակ ներկում կիսափայլուն լատեքսային ներկով /ՇԵՆ կամ համարժեք	մ²	151.9	2.4	364.56
202	Պատերի ց/ավազե սվաղի իրականացում	մ²	289.40	2.4	694.56
203	Պատերի երեսպատում հախճասալով	մ²	289.40	6.4	1852.16
204	Պլաստմասե կախովի առաստաղի իրականացում հիմնակմախքի պատրաստումով	մ²	21.5	4	86
205	Մետաղական խողովակներով կախովի առաստաղի կարկասի մոնտաժում	տ	1.270	240	304.8
206	Խողովակ 40*20*2	գծմ	726.0	2.4	1742.4
207	Մետաղական էլեմենտների ներկում	տ	1.27	40	50.8
208	Պլաստմասե կախովի առաստաղի իրականացում հիմնակմախքի պատրաստումով 400x400 Armstrong կամ համարժեք	մ²	233.6	3.2	747.52
	Ընդամենը՝ Մարզադահլիճի գույք, մարզադահլիճի պատուհանների ցանց, մարզադահլիճի առաստաղի ցանց, ներքին հարդարման աշխատանքներ				12300.3737
	11. Արտաքին պատերի ջերմամեկուսացում, արտաքին հարդարման աշխատանքներ, աստիճաններ				
	11.1.Արտաքին պատերի ջերմամեկուսացում				
209	Արտաքին պատերի երկշերտ ջերմամեկուսացում՝ բազալտե մանրաթելային սալերով, վերին շերտը 30մմ, ստորինը 70մմ բոլոր դետայներով	մ²	60	8	480
	11.2.Արտաքին հարդարման աշխատանքներ				
210	Պատերի երեսապատում բազալտե սալերով 50մմ	մ²	10.6	20	212
211	Պատերի երեսապատում տրավերտինե սալերով 30մմ հաստ սպիտակ	մ²	50	16	800
212	Արտաքին պատի երեսապատում ալիկաբոնդով	մ²	102.5	24	2460
213	Որմնախարիսխի երեսապատում բազալտե սալերով 50մմ	մ²	57	16	912
214	Փայտամածի իրականացում արտաքին աշխատանքների համար	մ²	490.00	1.6	784
	11.3.Աստիճաններ				
215	Բետոնե հարթակի պատրաստում B15 դասի բետոնից	մ³	1.070	64	68.48
216	Ամրանավորում ցանցով	կգ	13.91	0.48	6.6768
217	"Ռաբիցա", d=1,5-1,8մմ, բջիջը 50x50մմ	մ²	10.70	1.6	17.12
218	Հարթակի երեսապատում 30մմ հաստ.բազալտե սալերով	մ²	9.7	16	155.2
219	Աստիճանների երեսապատում 30մմ հաստ.բազալտե	մ²	0.33	24	7.92
220	Աստիճանների կողային մասերի երեսապատում բազալտե 30մմ	մ²	3.50	24	84
221	Դեկորատիվ ցինկապատ ճաղաշար h=600մմ,	գծմ	18.600	20	372
	Ընդամենը՝ Արտաքին պատերի ջերմամեկուսացում, արտաքին հարդարման աշխատանքներ, աստիճաններ				6359.3968
	12.Բարեկարգում				
	12.1.Կանաչապատում				
222	Սևահողի բարձում ա/մեք	մ³	17.5	0.48	8.4
223	Սեվահողի ներկրում 7կմ-ից	տ	21	1.6	33.6
224	Տարածքի հարթեցում ձեռքով բուսահողի և կարմիր ավազի փոում 12սմ	մ²	249.0	1.6	398.4
225	Սերմի ցանում և ջրում	մ²	249.0	0.8	199.2

1	2	3	5	6	7
	12.2.Սալվածք				
226	Տարածքի հարթեցում ձեռքով	մ²	117.0	0.4	46.8
227	Խճի շերտ սալվածքի տակ 100մմ	մ²	117.00	0.8	93.6
228	Բետոնե ծածկույթ B15 դասի բետոնով 10 սմ	մ³	11.7	64	748.8
229	Բազալտե սալիկներով սալվածքի իրականացում **Բրեկչա**	մ²	117.0	16	1872
230	Բազալտե եզրաքարերի իրականացում 150*300	գծմ	267.2	6.4	1710.08
	12.3.Ասֆալտ				
231	Խճի շերտ 10սմ	մ²	1714.0	0.8	1371.2
232	Ա/բետոնե շերտի իրականացում 30մմ հաստությամբ մանրահատ	մ²	1714.0	3.2	5484.8
233	Ա/բետոնե շերտի իրականացում 40մմ հաստությամբ խոշորահատ	մ²	1714.0	4	6856
	Ընդամենը՝ Բարեկարգում				18822.88
	13.Ներքին ջրամատակարարում, ներքին կոյուղի, էլեկտրալուսավորություն				
	13.1.Ներքին ջրամատակարարում				
	Մոնտաժում				
234	Պոլիպրոպիլենային խողովակի մոնտաժում հողի մեջ 50*8,4 փորձարկում	գծմ	100.0	2.4	240
235	Պոլիպրոպիլենային խողովակի մոնտաժում հողի մեջ 40*6,7 փորձարկում	գծմ	9.0	2.4	21.6
236	Պոլիպրոպիլենային խողովակի մոնտաժում հողի մեջ 25*4,2 փորձարկում	գծմ	15.0	2.4	36
237	Պոլիպրոպիլենային խողովակի մոնտաժում պատի վրա 50*8,4 փորձարկում	գծմ	6.0	2.4	14.4
238	Պոլիպրոպիլենային խողովակի մոնտաժում հողի մեջ 32*5,4 փորձարկում	գծմ	12.0	2.4	28.8
239	Պոլիպրոպիլենային խողովակի մոնտաժում պատի վրա 25*4,2 փորձարկում	գծմ	10.0	2.4	24
240	Պոլիպրոպիլենային խողովակի մոնտաժում պատի վրա 20*3,4 փորձարկում	գծմ	10.0	2.4	24
241	Պոլիպրոպիլենային խողովակի մոնտաժում պատի վրա 15 փորձարկում	գծմ	40.0	2.4	96
242	Պոլիպրոպիլենային խողովակների ձևավոր մասեր	հատ	100	1.2	120
243	Փական Փ40մմ	հատ	1	2.4	2.4
244	Փական Փ25-Փ32մմ	հատ	8.0	2.4	19.2
245	Փական Փ20մմ	հատ	2.0	2.4	4.8
246	Փական Փ15մմ	հատ	25.0	2.4	60
247	Լվացարանի խառնարանով ծորակի մոնտաժում	հատ	5.00	16	80
248	Ցնցուղի խառնարանով ծորակի մոնտաժում	հատ	5	40	200
249	Ջրաչափական հանգույցի տեղադրում ֆիլտրով Փ40 առանց ջրաչափի արժեքի	կ-տ	1	12	12
250	Լվացարանի Գեյզեր ծորակ Էլեկտրական տաքացուցիչ	հատ	5	40	200
251	Խրամուղու մշակում ձեռքով	մ³	36.0	2.8	100.8
252	Եսլիջք	մ³	16.7	0.4	6.68
253	Հողի բարձում և տեղափոխում 7կմ հեռ.վրա	տ	34.7	1.6	55.584
254	Ավազի նախաշերտի խողովակի տակ 10սմ հաստ.	մ³	3.0	6.4	19.2
255	Ավազի պաշտպանիչ շերտ	մ³	9.0	6.4	57.6
256	Անցքերի բացում պատերում Փ200	հատ	1.0	8	8
257	Միացում գործող ջրագծին Փ50/150	հատ	1.0	12	12
258	Հակահրդեհային փականի Փ50 տեղադրում մետաղապլաստե արկղով 620*850*250, կաշեփողե խողովակով 20m	հատ	3.0	43.2	129.6
259	Բետոնե նախապատրաստական շերտ B7,5 բետոնով	մ³	0.5	34.4	17.6128
260	Ե/բ հավաքովի էլեմենտներից ջրամատակարարման կլոր դիտահորի մոնտաժու Փ1000մմ /սալով, տակդիրով,օղակներով	մ³	2.8	120	336
261	Թուջե մտոց d=600մմ	հատ	2.0	43.2	86.4
262	Մետաղական ելարան	կգ	20.0	0.96	19.2
263	Մետաղական ելարանի յուղաներկում	տն	0.0	43.2	0.864
264	Ներդիր տարրեր դիտահորի համար	տն	0.0	960	38.4
265	Գոյություն ունեցող ա/բետոնե ծածկույթի քանդում	մ³	1.5	2.8	4.2
266	Շին.աղբի բարձում ձեռքով ա/ինքնաթափ մեքենաների վրա և տեղափոխում 7կմ	տն	3.0	1.68	5.04
267	Խիճ h=16սմ	մ²	15.0	0.704	10.56
268	Խիճ h=4սմ տոգորված բիտումով	մ²	15.0	0.704	10.56

1	2	3	5	6	7
269	Տաք խոշորահատիկ ներքին շերտ ա/բետոն „ h=6սմ	$մ^2$	15.0	4.8	72
270	Տաք մանրահատիկ վերին շերտ ա/բետոն h=4սմ	$մ^2$	15.0	3.2	48
	13.2.Ներքին կոյուղի				
	Մոնտաժում				
271	Պոլիվինիլքլորիդե խողովակի մոնտաժում, կոյուղու համար, d=160*3սմ, հողի մեջ փորձարկումով	գծմ	36.0	4.8	172.8
272	Պոլիվինիլքլորիդե խողովակի մոնտաժում, կոյուղու համար, d=110*2,8մմ, փորձարկումով	գծմ	3.0	4	12
273	Պոլիվինիլքլորիդե խողովակի մոնտաժում, կոյուղու համար, d=110*2,8մմ, փորձարկումով	գծմ	26.0	4	104
274	Պոլիվինիլքլորիդե խողովակի մոնտաժում, կոյուղու համար, d=50*2,5մմ, փորձարկումով	գծմ	22.00	2.4	52.8
275	Պոլիվինիլքլորիդե խողովակի ձևավոր մասեր 150փ50	հատ	48	0.8	38.4
276	Կերամիկական լվացարան ոտնակով պլաստմասե 22ձև սիֆոնով մոնտաժում	կ-տ	5	28	140
277	Զուգարանակոնքի կերամիկական թեք թողարկով /ցածր տեղակայված լվացման տակառիկով/ և ճկուն խողովակով մոնտաժում	կ-տ	5.0	76	380
278	Խորր տակդիր	կ-տ	5.0	20	100
279	Հոսակի մոնտաժում Փ100	հատ	5.0	12	60
280	Միացում գործող կոյուղագծին	տեղ	1.0	12	12
281	Խրամուղու մշակում ձեռքով	$մ^3$	26.0	2.8	72.8
282	Եղիցք ձեռքով	$մ^3$	8.50	2	17
283	Հողի բարձում և տեղափոխում 7կմ հեռ.վրա	տ	31.5	1.6	50.4
284	Ավազի նախաշերտի խողովակի տակ պատրաստում 10սմ հաստ.	$մ^3$	1.95	6.4	12.48
285	Ավազի պաշտպանիչ շերտ	$մ^3$	9.75	6.4	62.4
286	Անցքերի բացում ծածկի սալերում Փ100	հատ	6.00	12	72
287	Անցքերի բացում ծածկի սալերում Փ300	հատ	6.00	12	72
288	Անցքերի բացում պատի վրա Փ350	հատ	1.00	20	20
289	Անցքերի լցափակում պոլիմերցեմենտային լուծույթով	$մ^3$	0.01	4	0.04
290	Գոյություն ունեցող ա/բետոնե ծածկույթի քանդում	$մ^3$	1	2.8	2.8
291	Շին.աղբի բարձում ձեռքով ա/ինքնաթափ մեքենաների վրա և տեղափոխում 7կմ	տն	2.0	2	4
292	Կոյուղու հավաքովի ե/բետոնե դիտահորերի մոնտաժում Փ1000	$մ^3$	1.6	104	166.4
293	Թուջե մտոց	հատ	1.0	43.2	43.2
294	Ներդիր տարբեր դիտահորի համար	տն	0.0	960	19.2
295	Մետաղական ելարան	կգ	10.0	0.96	9.6
296	Մետաղական ելարանի յուղաներկում	տն	0.0	43.2	0.432
297	Խիճ h=16սմ	$մ^2$	10.0	0.8	8
298	Խիճ h=4սմ տոգորված բիտումով	$մ^2$	10.0	0.8	8
299	Տաք խոշորահատիկ ներքին շերտ ա/բետոն „ h=6սմ	$մ^2$	10.0	4.8	48
300	Տաք մանրահատիկ վերին շերտ ա/բետոն h=4սմ	$մ^2$	10.0	3.2	32
	13.3.Էլեկտրալուսավորություն				
301	Ավտոմատ անջատիչների արկղ 36 մոդուլի համար	հատ	1.00	20	20
302	Ավտոմատ եռաբևեռ անջատիչ 80A 10kA	հատ	1.00	8	8
303	Ավտոմատ միաբևեռ անջատիչ 40A 10kA	հատ	10.00	8	80
304	Ավտոմատ միաբևեռ անջատիչ 25A 10kA	հատ	17.00	4	68
305	Ավտոմատ միաբևեռ անջատիչ 32A 10kA պահուստային	հատ	1.00	2.4	2.4
306	Լուսատ LED 600*600առաստաղի 36wt 4000K	հատ	48.00	12	576
307	Լուսատ LED 190*190առաստաղի 20wt 4000K	հատ	24.00	12	288
308	Լուսատ LED 12wt 3000K IP20	հատ	11.00	8	88
309	Լուսարձակ LED 100wt 5000K 1500lm IP67	հատ	22.00	8	176
310	Վարդակ հողանցման հպակով 230Վ 16Ա միաբևեռ	հատ	86.00	1.6	137.6
311	Անջատիչ երկու սեղմակով 230Վ 10Ա	հատ	21.00	1.6	33.6
312	Անջատիչ մեկ սեղմակով 230Վ 10Ա	հատ	34	1.6	54.4
313	Տուփ անջատիչների և խրոցակային վարդակների համար տեղադրումով	հատ	141	0.8	112.8

1	2	3	5	6	7
314	Տուփ ճյուղավորիչ տեղադրումով	հատ	25	0.8	20
315	ВВГнг 3*1,5 մմ^2 պղնձե ջիղով, մեկուսացված, չայրվող մալուխի մոնտաժում անցկացված զսպանակախողովակով	գծմ	354.00	2.4	849.6
316	ВВГнг 3*2,5մմ^2 պղնձե ջիղով, մեկուսացված, չայրվող մալուխի մոնտաժում անցկացված մայուխատարով	գծմ	655.00	1.2	786
317	ВВГнг 3*4 մմ^2 պղնձե ջիղով, մեկուսացված, չայրվող մալուխի մոնտաժում անցկացված մայուխատարով	գծմ	735.00	0.8	588
318	ВВГнг- 3*6մմ^2 պղնձե ջիղով, մեկուսացված, չայրվող մալուխի մոնտաժում կախովի առաստաղի տակ զսպանակախողովակով	գծմ	298.00	1.6	476.8
319	Պղնձե մալուխի մոնտաժում ВВГ$_{нг}$ 5*16 мм^2	գծմ	35	4.8	168
